# Պատասխաններ Հաճախակի Տրվող Հարցերին՝ Ներգաղթային Քաղաքականություն և Ազատություն Խտրականությունից

Լոս Անջելեսի միասնական դպրոցական շրջանի (ԼԱՄԴՇ) հիմնական նպատակներից մեկն է ստեղծել անվտանգ միջավայր ուսուցում իրականացնելու համար, որտեղ բոլոր ուսանողները անկախ ներգաղթային կարգավիճակի, կրոնի, հաշմանդամության, ազգության, ցեղատեսակի, էթնիկ պատկանելիության, սեռի կամ սեռական ուղղվածության, արժանանում են հարգանքի և ունեն հնարավորություն ստանալ որակյալ կրթություն:

Ստորև ներկայացվում են ներգաղթային քաղաքականության և խտրականության, ճնշման գործադրման դեմ պայքարի վերաբերյալ նրանց կողմից առաջադրված հարցերի պատասխանները

<u>Ներգաղթային Կարգավիճակ</u>

**Հարց 1: Ներգաղթի վերաբերյալ Նախագահ Թրամփի կողմից տրված հրամանագրերից քանի՞սն են ազդեցություն թողել այն ուսանողների և նրանց ընտանիքների վրա, ովքեր չունեն օրինական ներգաղթային կարգավիճակ**

Պատասխան 1: 2017թ.-ի հունվարի 25-ին Նախագահ Թրամփը ստորագրել է հրամանագրեր ներգաղթի և սահմանների անվտանգության վերաբերյալ, այդ թվում՝ ռեսուրսների ավելացում ներգաղթի օրենքը իրագործելու համար, ռեսուրսների ընդունում ԱՄՆ-Մեքսիկա սահմանին պատկառուցելու համար և դաշնային դրամաշնորհների դադարեցում և դրանց փոխարինում ԱՄՆ Կառավարության խոսքերով «պատժամիջոցների իրավազորության»:

Այս հրամանագրերը կարող են բողոքարկվել դատարանում կամ օրենսդիր մարմինների կողմից: 2017թ.-ի հունվարի 27-ին Նախագահ Թրամփը նաև ստորագրեց հրամանագիր յոթ երկրներից ԱՄՆ մուտք գործելու սահմանափակման վերաբերյալ: Այս հրամանագիրը ներկայապահին բողոքարկվում է դատարանում:

Ներգաղթի վերաբերյալ հրամանագրերը չեն փոփոխում Լոս Անջելեսի պարտավորությունը տրամադրել անվճար որակյալ կրթություն Տարածաշրջանի բոլոր ուսանողներին անկախ նրանց ներգաղթի կարգավիճակից:

**Հարց 2: Արդյոք պետական K-12 դպրոցները պարտավո՞ր են ապահովել անվճար պետական կրթություն ուսանողներին անկախ ներգաղթային կարգավիճակից:**

Պատասխան 2: Այո: ԱՄՆ-ի բոլոր երեխաները ունեն սահմանադրական իրավունք հավասարապես հնարավորություն ունենալ անվճար պետական կրթության անկախ նրանց կամ նրանց ծնողների ներգաղթային կարգավիճակի: Այդ իրավունքը հաստատվել է ԱՄՆ-ի Գերագույն

Դատարանի կողմից, *Փլիեր և Դոե գործի* շրջանակներում: Խտրականությունը նաև արգելված է դաշնային օրենքով համաձայն 1964թ.-ի Քաղաքացիական իրավունքների մասին օրենքի IV, VI, և IX բաժինների:

- **Հարց 3: Արդյոք Լոս Անջելեսի Միասնական դպրոցական շրջանը պահանջու՞մ է ուսանողի կամ նրա ընտանիքի անդամի ներգաղթային կարգավիճակի մասին տեղեկատվություն կրթական հաստատություն ընդունելության կամ այլ կրթական ծրագրեր իրականացնելու համար:**

Պատասխան 3: Լոս Անջելեսի Միասնական Դպրոցական շրջանը չի պահանջում ուսանողի կամ նրա ընտանիքի անդամի ներգաղթային կարգավիճակի մասին տեղեկատվություն կրթական հաստատություն ընդունելության կամ այլ կրթական ծրագրեր իրականացնելու համար: Այն ներառում է դիմումներ փոխադրման, անվճար/զածր գներով սննդի տրամադրման, ուսումնական ծրագրերի, արտադպրոցական միջոցառումների և այլ ծառայությունների համար:

**Հարց 4: Արդյոք Լոս Անջելեսի Միասնական դպրոցական շրջանը հրապարակու՞մ է ուսանողի ներգաղթային կարգավիճակի կամ ուսանողի անձնական տվյալների մասին դաշնային ներգաղթի մարմիններին:**

Պատասխան 4: Լոս Անջելեսի Միասնական դպրոցական շրջանը չի հավաքագրում ուսանողի ներգաղթային կարգավիճակի մասին տեղեկատվություն (եթե ուսանողը կամ ծնողը չեն տեղեկացնում Տարածաշրջանին, որ նագրանցվել է օտարերկրյա ուսանող կարգավիճակով կամ ծառայողական վիզայի միջոցով): Ուստի Լոս Անջելեսի Միասնական դպրոցական շրջանը չունի այդպիսի տեղեկատվություն դաշնային ներգաղթի մարմիններին հայտնելու համար: Եթե Լոս Անջելեսի Միասնական դպրոցական շրջանը պատահաբար իմանում է ուսանողի կարգավիճակի մասին, այդ տեղեկատվությունը ենթակա է չբացահայտման:

Ընտանեկան Կրթական իրավունքների և գաղտնիության պահպանման մասին օրենքով սովորաբար արգելվում է, որպեսզի դպրոցները երրորդ անձանց տրամադրեն ուսանողի կրթության վերաբերյալ տվյալներ: Այնուամենայնիվ կարող են լինել բացառություն կազմող հանգամանքներ, որոնց հետևանքով Տարածաշրջանից կարող են պահանջել տրամադրել աշակերտի մասին տվյալներ դաշնային ներգաղթի մարմիններին, ներառյալ հետևյալը՝ 1) եթե նրանց ներկայացվում է օրինական դատական ծանուցում, ձերբակալման մասին օրդեր կամ դատական որոշում և 2) առկա են արտակարգ իրավիճակներ, ինչպես օրինակ հաստատված վտանգ հասարակության անվտանգությանը:

**Հարց 5: Արդյոք Լոս Անջելեսի Դպրոցական Ոստիկանության բաժինը որևէ կերպ մասնակցու՞մ է դաշնային ներգաղթի ուսումնասիրությունների գործում:**

Answer 5: Լոս Անջելեսի Դպրոցական Ոստիկանության բաժնի առաջնային նպատակն է դպրոցներում ապահովել անվտանգ միջավայր

ուսուցում իրականացնելու համար: Լոս Անջելեսի Դպրոցական Ոստիկանության բաժնի աշխատակիցները չեն հետաքրքրվում ներգաղթի կարգավիճակի մասին: Դեռ ավելին, Լոս Անջելեսի Դպրոցական Ոստիկանության բաժինը չի համագործակցում ներգաղթի մարմինների հետ, եթե չկա արտակարգ իրավիճակ, որը վերաբերում է ուսանողների կամ աշխատակիցների անվտանգությանը:

**Հարց 6: Կարո՞ղ են դաշնային ներգաղթի մարմինները ներխուժել Լոս Անջելեսի միասնական դպրոցական շրջանի կամպուս:**

Պատասխան 6: Դաշնային ներգաղթի մարմինները առաջնորդվում են «խոցելի վայրերում», այդ թվում՝ դպրոցներում, հիվանդանոցներում և ժամերգությունների անցկացման հաստատություններում հարկադիր գործողություններ կատարելուց զերծ մնալու քաղաքականությամբ: Քաղաքականությունը գործում է այս փաստաթղթի կազմելու ժամանակ: Բացի այդ ինչպես այլ իրավապահ մարմինները, այնպես էլ դաշնային ներգաղթի մարմինները կարող են ներխուժել կամպուս բացառություն կազմող հանգամանքների առկայության դեպքում, ինչպես օրինակ անհապաղ լուծում պահանջող հասարակության անվտանգությանը առնչվող հարցեր, կամ եթե առկա է օրինական խուզարկության անցկացման հրաման, դատարանի ծանուցում կամ դատական որոշում: Լրացուցիչ տեղեկատվություն կարելի է ստանալ Տարածաշրջանի տեղեկատու ուղեցույցից *REF-6767.1: ԼՄԴՇ Կամպուսները որպես ապահով գոտի և ռեսուրսային կենտրոն*.

**Հարց 7: Ի՞նչ կարող է պատահել, եթե ես օգտվում եմ հետաձգված գործողություններ ԱՄՆ մուտք գործած անչափահասների վերաբերյալ քաղաքականությունից (DACA):**

- Պատասխան 7: Հետաձգված գործողություններ ԱՄՆ մուտք գործած անչափահասների վերաբերյալ (DACA) քաղաքականությունը իրականացվել է 2012թ.-ի հունիսին Օբամայի Կառավարության օրոք: Ներկայապահին Նախագահի նոր աշխատակազմը չի արձակել հրահանգ այն մասին, թե արդյոք այն փոփոխելու կամ վերացնելու է DACA ծրագիրը: DACA-ի մասին տեղեկատվություն կարելի է գտնել Ազգային Ներգաղթի Օրենքի կենտրոնի https://www.nilc.org/issues/daca/ կայքից:

**Հարց 8: Ի՞նչ ռեսուրսներ կան օգնելու համար այն ուսանողներին և ընտանքներին, ովքեր նոր են մուտք գործել երկիր և ցանկություն ունեն ընդունվել Տարածաշրջանի դպրոց:**

Պատասխան 8: Տարածաշրջանի Դպրոց ընդունելության և արդյունքների գնահատման Կենտրոնը (S.E.P.A.) տրամադրում է ուսանողներին և նրանց ընտանիքներին ռեսուրսներ ուսումնական, սոցիալական և էմոցիոնալ առումով հաջողության հասնելու համար: S.E.P.A կենտրոնը նաև առաջարկում է դիմել այլ սոցիալական ծառայություններ և իրաբանական օգնության ցուցաբերման ծրագրերի, որոնք կապված չեն Տարածաշրջանի հետ, սակայն

հասանելի են ընտանիքներին: S.E.P.A գլխամասային կենտրոնը բաց է ժամը 08:00-ից մինչև 16:30, երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ օրը հետևյալ հասցեով՝ 1339 Անգելինա փող., Լոս Անջելես, հեռախոսահամարը՝ (213) 482-3954:

Բացի այդ Տարածաշրջանը բացել է ժամանակավոր մեծամաշտաբ աջակցության կայքեր տարածաշրջանում, որոնք տրամադրում են նմանատիպ ռեսուրսներ S.E.P.A. կենտրոնին: Կարող եք գտնել Ձեր մոտակա մեծամաշտաբ աջակցության կենտրոնը զանգահարելով թեժ գծին, որը ստեղծվել է այս և այլ հարցերին պատասխանելու համար: Թեժ գծի հեռախոսահամարն է՝ (866) 742-2273.

**Հարց 9: Ի՞նչ անել, եթե ես ունեմ լրացուցիչ հարցեր ներգաղթի օրենքի և ընթացակարգի վերաբերյալ:**

Պատասխան 9: Տարածաշրջանի աշխատակազմը չի կարող տրամադրել նեղ մասնագիտական իրավաբանական խորհրդատվություն ներգաղթի հարցերի շուրջ: Այնուամենայնիվ Տարածաշրջանը կարծում է, որ ներգաղթի հարցով զբաղվող արտոնագրված փաստաբանները հավանաբար կարող են տրամադրել վստահելի իրավաբանական խորհրդատվություն ներգաղթի հարցերի շուրջ: Ձեր ապահովության համար Տարածաշրջանը խորհուրդ չի տալիս դիմել ոչ արտոնագրված փաստաբանների իրավաբանական խորհրդատվություն ստանալու համար: Կարելի է գտնել անվճար կամ ցածր գնով շահույթ չհետապնդող ներգաղթային իրավաբանական ծառայություններ մատուցող հաստատություններ https://www.immigrationlawhelp.org. կայքից: Ցանկանում ենք նշել, որ այս կայքից ստացված իրավաբանական խորհրդատվություն տրամադրող մարմինների խորհուրդները միշտ չէ, որ համընկնում են Տարածաշրջանի կարծիքի հետ: Լրացուցիչ տեղեկատվություն և ռեսուրսներ կարելի է գտնել http://achieve.lausd.net/familyresources կայքից:

Խորհուրդ է տրվում ներգաղթի վերաբերյալ հարցեր ունեցող ընտանիքներին դիմել ներգաղթի հարցերով զբաղվող իրավաբանական ծառայություններ հնարավորինս շուտ, քանի որ նրանց աշխատանքային ժամերը խիստ ծանրաբեռնված են:

Ընդունելության կամ ռեսուրսների ստացման վերաբերյալ լրացուցիչ հարցերի դեպքում խնդրում ենք կապվել S.E.P.A. Կենտրոն (213) 482-3954 հեռախոսահամարով:

## Խտրականությունից և ճնշումից ազատում

**Հարց 10: Ինչպիսի՞ն է Լոս Անջելեսի Միասնական դպրոցական շրջանի քաղաքականությունը խտրականության և ճնշման գործադրման վերաբերյալ:**

Answer 10: Տարածաշրջանը ձգտում է կրթական ոլորտում հաջողությունների, հավասարության և հասանելիության ապահովմանը: Մեր քաղաքականությունը արգելում է խտրականություն կամ ճնշման գործադրում մեր ուսանողների, ընտանիքների կամ աշխատակիցների դեմ անկախիրական կամ կարծեցյալ կրոնի, հաշմանդամության, ազգության, ցեղատեսակի, էթնիկ պատկանելիության, սեռի, սեռական ուղղվածության

Տարածաշրջանի խտրականության դեմ պայքարի մասին լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար, խնդրում ենք այցելել Կրթական հավասարության պահպանման գրասենյակի կայք http://achieve.lausd.net/eeco.

**Հարց 11: Ի՞նչ անել, եթե իմ երեխան կամ ես խտրականության կամ ճնշման ենք ենթարկվել:**

Պատասխան 11: Տարածաշրջանը խտրականության և/կամ ճնշման գործադրման մասին դիմումներին շատ լուրջ մոտեցում է ցուցաբերում: Խնդրում ենք անմիջապես զեկուցել այդ մասին դպրոցի ղեկավարին, փոխտնօրենին, կամ Ձեր տեղական իրավապահ մարմիններին: Դպրոցական խտրականության մասին տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք կապ հաստատել Կրթական հավասարության պահպահման գրասենյակ (213) 241-7682 հեռախոսահամարով կամ այցելել http://achieve.lausd.net/eeco կայքը:

Ավելի թարմ տեղեկատվության համար այցելեք Տարածաշրջանի գլխավոր էջ lausd.net